

**ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1/4**

**9 հունվարի 2018թ.**

Քննարկվեց «ՍԻՄՈՆՅԱՆ» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 23.11.2017թ. N1012623 ակտի դեմ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.06.2017թ. N1012623 հանձնարարագրի համաձայն «ՍԻՄՈՆՅԱՆ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև՝ ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 23.11.2017թ. N1012623 ակտը, որով լրացուցիչ վճարման է առաջադրվել ընդամենը 2.464.180 դրամ:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ ընկերության կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 23.11.2017թ. N1012623 ակտը վերադասության կարգով գանգատարկվելուց բացի, ակտի դեմ հայցադիմում է ներկայացվել նաև ՀՀ վարչական դատարան:

ՀՀ վարչական դատարանի 29.12.2017թ. որոշման համաձայն (վարչական գործ թիվ ՎԴ5/0267/05/17) «ՍԻՄՈՆՅԱՆ» ՍՊԸ հայցադիմումն ընդդեմ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 23.11.2017թ. N1012623 ակտի 1-ին և 3-րդ կետերը վերացնելու պահանջի մասին, ընդունվել է վարույթ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետի՝ դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ:

Նույն օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ «ՍԻՄՈՆՅԱՆ» ՍՊԸ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 443-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո ր ո շ ու մ է՝**

«ՍԻՄՈՆՅԱՆ» ՍՊԸ-ի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**